

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ 2020Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կոտայքի մարզի մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 251200 մարդ, որը հանրապետության ողջ բնակչության 8.5%-ն է, որից 137000-ը քաղաքաբնակներ են (54.5%), 114200-ը՝ գյուղաբնակներ (45.5%):

2020թ. առաջին կիսամյակում մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից թողարկվել է 100.5 մլրդ. դրամի արդյունաբերական արտադրանք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 81.6 մլրդ. դրամի դիմաց կամ ծավալներն աճել են 23.2%-ով: Այսպես, 2020թ. առաջին կիսամյակում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը կազմել է 74.3 մլրդ. դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է 16.5 մլրդ. դրամով կամ 28.5%-ով: Ընդ որում աճ գրանցվել է հիմնականում սննդամթերքի (4.3%), դեղագործական արտադրանքի (19.0%), հիմնային մետաղների (22.9%) արտադրության ճյուղերում: Հանքագործական արդյունաբերության ոլորտում արտադրվել է 1.4 մլրդ. դրամի արտադրանք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի չափով: Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալներն աճել են 11.3 %-ով կամ արտադրվել է 23.6 մլրդ. դրամի էլեկտրաէներգիա:

2020թ. առաջին կիսամյակում մարզում արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալը կազմել է 96.3 մլրդ. դրամ՝ նախորդ տարվա 81.0 մլրդ. դրամի դիմաց կամ ծավալները ավելացել են 18.9%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում արտադրանքի իրացումը ներքին շուկայում կազմել է 59.4 մլրդ. դրամ, իսկ արտահանումը՝ 36.9 մլրդ. դրամ, որից ԱՊՀ երկրներ է արտահանվել 24.1 մլրդ. դրամի և այլ երկրներ՝ 12.8 մլրդ. դրամի արտադրանք: 2020թ. առաջին կիսամյակում արտադրանքի արտահանման ծավալը 2019թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 62.6%-ով:

Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը 2020թ. առաջին կիսամյակում կազմել է 29.2 մլրդ. դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 29.0 մլրդ դրամի դիմաց:

Իսկ բնակչությանը մատուցած ծառայությունների ծավալը կազմել է 34.9 մլրդ. դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 65.8 մլրդ. դրամի դիմաց կամ ծավալները նվազել են 47.0 %-ով:

Հաշվետու ժամանակահատվածում մարզում արտադրվել է 5.3 հազ. տոննա միս, ինչը 39.5%-ով ավել է նախորդ տարվա առաջին կիսամյակում արտադրվածի համեմատ: Կաթի արտադրության ծավալն աճել է 0.8 %-ով կամ արտադրվել է 39.1 հազ. տոննա կաթ, իսկ ձվի արտադրության ծավալը կազմել է 102.6 մլն. հատ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատ ավել է 37.5%-ով:

2020թ. առաջին կիսամյակում մարզում շինարարության ծավալը կազմել է 6.8 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պակաս է 31.3%-ով: